ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

4 սեպտեմբերի 2017 թվական **թիվ 113** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից նավերով արտահանվող, լիրքով, խուռնաբեռն, լցվածքով փոխադրվող Եվրասիական տնտեսական միության այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց դեպքում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից մեկնման ժամանակ թույլատրվում է քանակի եւ (կամ) վիճակի այնպիսի փոփոխություն, որը տեղի է ունեցել նավի բեռնասրահներ (հատվածամասեր, լցարաններ) այդ ապրանքները բեռնելու ժամանակ դրանք խառնելու արդյունքում

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Մաքսային օրենսգրքի 94-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից նավերով արտահանվող, լիրքով, խուռնաբեռն, լցվածքով փոխադրվող Եվրասիական տնտեսական միության այն ապրանքների ցանկը,

որոնց դեպքում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից մեկնման ժամանակ թույլատրվում է քանակի եւ (կամ) վիճակի այնպիսի փոփոխություն, որը տեղի է ունեցել նավի բեռնասրահներ (հատվածամասեր, լցարաններ) այդ ապրանքները բեռնելու ժամանակ դրանք խառնելու արդյունքում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո, սակայն «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի սեպտեմբերի 4-ի
թիվ 113 որոշմամբ

ՑԱՆԿ

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից նավերով արտահանվող, լիրքով, խուռնաբեռն, լցվածքով փոխադրվող Եվրասիական տնտեսական միության այն ապրանքների, որոնց մասով Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից մեկնման ժամանակ թույլատրվում է քանակի եւ (կամ) վիճակի այնպիսի փոփոխություն, որը տեղի է ունեցել նավի բեռնասրահներ (հատվածամասեր, լցարաններ) այդ ապրանքները բեռնելու ժամանակ դրանք խառնելու արդյունքում*

Ապրանքի անվանումը	Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան
1. Նավթ հում, գազային խտուցք	2709 00
2. Հեղուկացված եւ գազանման այլ ածխաջրածնային գազեր՝ պրոպան, բութան, իզոբութան, պրոպան- բութան խառնուրդ տեխնիկական, պրոպան-բութան տեխնիկական, պրոպան-բութան ավտոմոբիլային, իզոբութանային թորամաս	2711 12 2711 13 2711 19 000 0 2901 10 000

* Սույն ցանկի կիրառման նպատակներով անհրաժեշտ է առաջնորդվել ինչպես ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրով, այնպես էլ ապրանքի անվանմամբ: